Ձեր PCD-ն ուղեգիր կուղարկի LIBERTY-ին, եթե Դուք պետք է այցելեք մասնագետի: Մասնագետն ատամնաբույժ է, ով լրացուցիչ կրթություն ունի ատամնաբուժության մեկ բնագավառում, ինչպիսին է օրինակ՝ ատամների հեռացման համար բերանի խոռոչի վիրահատությունը:

Ձեզ ուղեգիր հարկավոր չէ հետևյալի համար՝

- PCD-ի այցելություններ:
- Հրատապ կամ արտակարգ իրավիճակի խնամք

Ձեր PCD-ն պետք է ձևաթուղթ ուղարկի LIBERTY: մասնագետի խնդրելու համար: Երբ LIBERTY-ն ստանա ձևաթուղթը և անհրաժեշտ տեղեկատվությունը, մենք կմշակենք հարցումը և Ձեզ գրավոր կտեղեկացնենք մեր որոշման մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանդարտների հարցումների և 72 ժամվա ընթացքում՝ հրատապ խնամքի համար: LIBERTY-ն կաշխատի Ձեզ հետ՝ մասնագետ ընտրելու համար և կարող է օգնել մասնագետին այցելելու ժամ պլանավորել, եթե հավանություն ստանաք:

Եթե Դուք հաստատում չստանաք, իրավունք ունեք բողոքարկել. անցեք Գլուխ 8-ի «Խնդիրների մասին գեկուցում և լուծում» բաժինը՝ բողոքարկման գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:

Եթե ցանկանում եք մեր ուղեգրերի քաղաքականության պատճենը, զանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY համարին՝ 877-855-8039 հեռախոսահամարներով:

## Նախնական հաստատում

Խնամքի որոշ տեսակների համար Ձեր PCD-ն կամ մասնագետը պետք է մեզ հարցնեն Նախքան Դուք խնամք կստանաք: Սա կոչվում է Նախնական լիազորություն կամ Նախնական հաստատում: Դա նշանակում է, որ LIBERTY-ը համաձայնում է, որ խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է:

Ատամնաբուժական խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե դա կանխում և վերացնում է բերանի խոռոչի հիվանդությունները, վարակները և ցավը, վերականգնում է ատամնաշարի ձևն ու գործառույթը կամ շտկում դեմքի խախտվածությունները կամ դիսֆունկցիան: Ատամնաբուժական ծառայությունները պետք է համապատասխանեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտության վերաբերյալ Medi-Cal Dental Program-ի կանոններին, որպեսզի ապահովագրվեն LIBERTY-ի կողմից:

Այս ատամնաբուժական ծառայությունները Նախնական հաստատման կարիք ունեն, նույնիսկ եթե դրանք ստանում եք LIBERTY ցանցի ատամնաբուժական մատակարարից.

- Ատամարմատի խողովակներ
- Շապիկներ
- Ամբողջական/մասնակի պրոթեզներ
- Խորը մաքրումներ (լնդերի տակի գոյացումների մաքրում և ատամարմատների քերում)
- Ընդհանուր անզգայացում և ներերակային (IV) ցավազրկում



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

### 37 | Ինչպես ատամնաբուժական խնամք ստանալ

Այլ ատամնաբուժական ծառայություններ, որոնք Ձեր ատամնաբուժական մատակարարը խորհուրդ է տալիս, կարող են նույնպես պահանջել նախնական հաստատում: Որոշ ծառայությունների համար, ինչպիսիք են խնամք մասնագետից կամ եթե Դուք կարիք ունեք խնամք ստանալ ցանցից դուրս, մենք կորոշենք 5 աշխատանքային օրվա ընթացքում սովորական ծառայության, կամ 72 ժամվա ընթացքում հրատապ խնամքի համար:

Մենք կուսումնասիրենք խնդրանքը՝ որոշելու, թե արդյոք խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է և ապահովագրված: LIBERTY-ը կկապվի Ձեզ հետ, եթե մեզ անհրաժեշտ լինեն լրացուցիչ տեղեկություններ կամ ավելի շատ ժամանակ՝ Ձեր հարցումը վերանայելու համար:

Մենք **չենք** վճարում մեր ուսումնասիրողներին, որպեսզի նրանք մերժեն ապահովագրությունը կամ ատամնաբուժական ծառայությունները: Եթե մենք չհաստատենք խնամքը, մենք կբացատրենք պատճառները և Ձեզ կտեղեկացնենք բողոքարկման Ձեր իրավունքների մասին: Ձեր բողոքարկման իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Գլուխ 8-ի «Խնդիրների մասին գեկուցում և լուծում» բաժինը:

## Երկրորդ կարծիքներ

Դուք կարող եք ցանկանալ երկրորդ կարծիք ստանալ Ձեր ատամնաբուժական մատակարարի կողմից անհրաժեշտ համարվող խնամքի կամ Ձեր ախտորոշման կամ բուժման ծրագրի մասին: Օրինակ՝ Դուք կարող եք երկրորդ կարծիք խնդրել, եթե վստահ չեք, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է բուժում կամ վիրահատություն:

Երկրորդ կարծիք ստանալու համար զանգահարեք Անդամների սպասարկման բաժին՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար), 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039 հեռախոսահամարներով:

Մենք կվճարենք երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր PCD-ն դա խնդրի, և Դուք երկրորդ կարծիքը կստանաք ցանցային ատամնաբույժից:

Դուք մեզնից թույլտվություն ստանալու կարիք չունեք երկրորդ կարծիք ստանալու համար, եթե ատամնաբույժը, որին ընտրել եք երկրորդ կարծիքի համար, հաստատված է: Մենք որոշում կկայացնենք 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանդարտ հարցումների և 72 ժամվա ընթացքում՝ հրատապ հարցումների դեպքում:

Եթե մենք մերժենք երկրորդ կարծիքի Ձեր խնդրանքը, մենք պետք է Ձեզ ուղարկենք Անբարենպաստ օգուտի որոշման ծանուցում (NABD): NABD-ի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար անցեք սույն տեղեկագրի Գլուխ 6-ի «Իրավունքներ և պարտականություններ» բաժինը:

## Խնամքի ժամանակին հասանելիություն

LIBERTY-ն պետք է ժամադրություններ տրամադրի հետևյալ ժամանակահատվածներում.

- Ատամների առողջության սկզբնական ժամադրություններ (քննություն, ռենտգեն)՝ 4 շաբաթվա ընթացքում:
- Սովորական ժամադրություններ (ներառյալ կանխարգելիչ խնամք)՝ 4 շաբաթվա ընթացքում:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

### 38 | Ինչպես ատամնաբուժական խնամք ստանալ

- Ժամադրություններ մասնագետների մոտ՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում (21+ տարեկան), 30 օրացուցային օրվա ընթացքում (մինչև 21 տարեկան):
- Հրատապ խնամքի ժամադրություններ (անմիջական ցավ/այտուց/արյունահոսություն)՝ 72 ժամվա ընթացքում:
- Արտակարգ իրավիճակի խնամք (անմիջական սուր ցավ/այտուց/արյունահոսություն)՝ 24 ժամվա ընթացքում:
- Աշխատանքային ժամերից հետո արտակարգ իրավիճակների հասանելիություն (պատասխանող ծառայություն կամ ուղղված մատակարարին)՝ օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:

## Ատամնաբուժական առողջության կրթական ծառայություններ

Ատամնաբուժական առողջության կրթական ծառայությունները կանխարգելիչ ծառայությունների և PCD այցելությունների մաս են կազմում:

LIBERTY-ն հոգ է տանում ոչ միայն ատամների մասին: Մենք հոգ ենք տանում մեր անդամների ընդհանուր առողջության և քաջառողջության մասին: Մեր Առողջապահական կրթության և ռեսուրսների թիմն (HEART) աշխատում է ուղղակիորեն համայնքներում՝ ներգրավելու անդամներին բերանի խոռոչի առողջության խնամքի, առկա ռեսուրսների և այն, թե ինչպես պետք է օգտագործեն իրենց ատամնաբուժական նպաստները:

Մենք տրամադրում ենք հեշտ հասանելիություն դեպի ատամնաբուժական ռեսուրսներ և ուսումնական նյութեր՝ անվճար: Բերանի խոռոչի առողջության և առողջության մասին խորհուրդներ կարող եք ստանալ այցելելով [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com):

Հավանեք և հետևեք LIBERTY-ին Instagram-ում և Facebook-ում, @libertydentalplan՝ կանխարգելիչ ատամնաբուժական խնամքի վերաբերյալ ավելի շատ խորհուրդներ ստանալու, տեսեք տեղական միջոցառումների թարմացումները, որտեղ կարող եք խոսել Ձեր տեղական HEART ներկայացուցչի հետ Ձեր բերանի խոռոչի առողջության հետ կապված խնդիրների մասին և ստանալ անվճար նվերներ, ինչպիսիք են ատամնաբուժական հիգիենայի պարագաները:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

# 4. Նպաստներ և ծառայություններ

## Ինչ է ապահովագրում Ձեր ատամնաբուժական ծրագիրը

Այս բաժնում մենք բացատրում ենք Ձեր բոլոր ապահովագրված ծառայությունները՝ որպես LIBERTY-ի անդամ: Ձեր ապահովագրված ծառայությունները անվճար են, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են: Խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե դա կանխում և վերացնում է բերանի խոռոչի հիվանդությունները, վարակները և ցավը, վերականգնում է ատամնաշարի ձևն ու գործառույթը կամ շտկում դեմքի խախտվածությունները կամ դիսֆունկցիան:

Մենք առաջարկում ենք ատամնաբուժական ծառայությունների հետևյալ տեսակները.

Ծառայության տեսակ	Օրինակներ
<input type="checkbox"/> Օրինակներ	Չնկումներ, ռենտգեն
<input type="checkbox"/> Կանխարգելիչ	Մաքրումներ, բուժում ֆտորիդով, հերմետիկներ (երեխաների համար)
<input type="checkbox"/> Վերականգնողական	Պլոմբներ, պսակներ
<input type="checkbox"/> Էնդոդոնտիկ	Պուլպոտոմիա, աստամարմատի խողովակների մշակում
<input type="checkbox"/> Պերիոդոնտալ	Լնդերի վիրահատություն, խորը մաքրում
<input type="checkbox"/> Հեռացվող պրոստոդոնտիկ ծառայություններ	Անմիջական և ամբողջական պրոթեզներ, մասնակի պրոթեզներ, պրոթեզի սուսինձներ
<input type="checkbox"/> Բերանի խոռոչի և դիմաձևոտային վիրահատություն	Հեռացումներ
<input type="checkbox"/> Օրթոդոնտիա	Բրեկետներ (երեխաների համար)
<input type="checkbox"/> Լրացուցիչ	Ցավազրկում, ընդհանուր անզգայացում

Ստորոջ կարդացեք նպաստների ամփոփումը և յուրաքանչյուր բաժինը, որպեսզի հավելյալ տեղեկություններ ստանաք այն ծառայությունների մասին, որոնք կարող եք ստանալ:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## Նպաստների ամփոփում

Ստորել բերված է չափահասների և երեխաների ատամնաբուժական նպաստների ամփոփագիրը.

 Նպաստ է
  Նպաստ չէ

Բուժգործողություն	Ամբողջ ծավալով	Հղիությանն առնչվող	Հմուտ բուժքույրական հաստատություն (SNF)/Միջանկյալ խնամքի հաստատություն (ICF)
Ներբերանային զննում (միայն 3 տարեկանից ցածր տարիքի երեխաների համար)	✓	✗	✓
Նախնական զննում (3+ տարեկան)	✓	✓	✓
Պարբերական զննում (3+ տարեկան)	✓	✓	✓
Կանոնավոր մաքրումներ	✓	✓	✓
Ֆտորիդով բուժում	✓	✓	✓
Վերականգնողական ծառայություններ, պլոմբեր	✓	✓	✓
Ծապիկներ*	✓	✓	✓
Խորը մաքրումներ և արմատների քերում (լնդերի տակի գոյացումների մաքրում)**	✓	✓	✓
Պարոդոնտոլոգիական սպասարկում (լնդեր)	✓	✓	✓
Առջևի ատամների արմատախողովակների մշակում	✓	✓	✓
Հետին ատամների արմատախողովակների մշակում	✓	✓	✓
Մասնակի պրոթեզներ	✓	✓	✓
Ամբողջական պրոթեզներ	✓	✓	✓
Բերանի խոռոչի և դիմաձևտային վիրահատություն/հեռացումներ	✓	✓	✓
Շտապ օգնության ծառայություններ	✓	✓	✓

### Բացառություններ.

\*1. Նպաստ չի ստանում, եթե 13 տարեկանից ցածր է: Սեղանատամների կամ նախասեղանատամների (հետևի ատամների) պսակները կարող են ապահովագրվել՝ ելնելով բժշկական անհրաժեշտությունից:

\*\*2. Նպաստ չի ստանում, եթե 13 տարեկանից ցածր է:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:



## Հետծննդաբերական խնամքի երկարաձգման ծրագիրը

Հետծննդաբերական խնամքի երկարաձգման ծրագիրը երկարաձգված ապահովագրություն է տրամադրում Medi-Cal-ի անդամներին՝ հղիության ընթացքում և հղիությունից հետո: Ծրագիրը երկարաձգում է ապահովագրությունը LIBERTY-ի կողմից հղիության ավարտից հետո մինչև 12 ամսով՝ անկախ եկամտից, քաղաքացիությունից կամ ներգաղթի կարգավիճակից, և լրացուցիչ գործողությունների կարիք չկա:

Բժշկական առումով անհրաժեշտ ծառայությունները ներառում են ապահովագրված ծառայություններ, որոնք ողջամիտ են և անհրաժեշտ հետևյալի համար.

- Պաշտպանել կյանքը:
- Կանխել լուրջ հիվանդությունը կամ զգալի հաշմանդամությունը:
- Թեթևացնել ուժեղ ցավը:
- Հասնել տարիքին համապատասխան աճին և զարգացմանը:
- Ձեռք բերել, պահպանել և վերականգնել ֆունկցիոնալ կարողությունները:

21 տարեկանից ցածր անդամների համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունները ներառում են վերոնշյալ բոլոր ապահովագրված ծառայությունները և ցանկացած այլ անհրաժեշտ ծառայություններ, բուժում կամ այլ միջոցներ՝ թերությունները, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու առողջական խնդիրները շտկելու կամ վերականգնելու համար, ինչպես պահանջվում է Վաղ և պարբերական գնման, ախտորոշման և բուժման (EPSDT) դաշնային նպաստը: Սա ներառում է խնամք, որն անհրաժեշտ է շտկելու կամ օգնելու թեթևացնել ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ առողջական խնդիրը կամ պահպանել անդամի վիճակը, որպեսզի այն չվատթարանա:

EPSDT-ն տրամադրում է կանխարգելման, ախտորոշման և բուժման ծառայությունների լայն շրջանակ ցածր եկամուտ ունեցող նորածինների, երեխաների և մինչև 21 տարեկան դեռահասների համար: EPSDT նպաստն ավելի ուժեղ է, քան մեծահասակների նպաստը և նախատեսված է երաշխավորելու, որ երեխաները վաղ հայտնաբերում և խնամք ստանան, որպեսզի առողջական խնդիրները հնարավորինս շուտ կանխվեն կամ ախտորոշվեն և բուժվեն: EPSDT-ի նպատակն է հավաստիացնել, որ առանձին երեխաներ ստանան իրենց անհրաժեշտ ատամնաբուժական խնամքը, երբ դրա կարիքն ունեն՝ ճիշտ խնամք, ճիշտ ժամանակին, ճիշտ միջավայրում:

## Ծառայությունների հաճախականությունը

Ատամնաբուժական ծառայություններն ապահովագրված են են բժշկական տեսանկյունից անհրաժեշտության առկայության դեպքում: Սակայն, որոշ ծառայությունների դեպքում սահմանափակումներ կան առ այն, թե քանի անգամ Դուք կարող եք ստանալ ծառայությունը՝ տվյալ ժամանակահատվածի ընթացքում: Ստորև բերված են ընդհանուր ծառայություններ, որտեղ կան սահմանափակումներ.

- Չննումներ. յուրաքանչյուր 6 ամիսը մեկ (21 տարեկանից ցածր), յուրաքանչյուր 12 ամիսը մեկը (21+ տարեկան) ըստ մատակարարի ընդունարանի:
- Ատամների և լնդերի ռենտգեն. 6 ամիսը մեկ, ըստ մատակարարի ընդունարանի:
- Բերանի խոռոչի ամբողջական ռենտգեն. 36 ամիսը մեկ, ըստ մատակարարի ընդունարանի:
- Պանորամիկ ռենտգեն. 36 ամիսը մեկ, ըստ մատակարարի ընդունարանի:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

- Կարիեսի ռիսկի գնահատումներ. ցածր ռիսկ՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, չափավոր ռիսկ՝ յուրաքանչյուր 4 ամիսը մեկ, բարձր ռիսկ՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ, 0-6 տարեկան բոլոր ռիսկային մակարդակների համար:
- Կարիեսի բուժման և կանխարգելիչ դեղամիջոցներ., 6 ամիսը մեկ (մինչև 7 տարեկան):
- Ատամների մաքրում. 4 ամիսը մեկ (SNF/ICF), 6 ամիսը մեկ (մինչև 21 տարեկան), 12 ամիսը մեկ (21+ տարեկան):
- Տեղային ֆտորիդ. 4 ամիսը մեկ (SNF/ICF), 6 ամիսը մեկ (մինչև 21 տարեկան), 12 ամիսը մեկ (21+ տարեկան):
- Ջերմետիկներ. 36 ամիսը մեկ (միայն մինչև 21 տարեկան), ըստ մատակարարի ընդունարանի:
- Լիցքեր. 12 ամիսը մեկ (մեկ կաթնատամի համար), յուրաքանչյուր 36 ամիսը մեկ (մեկ մշտական ատամի համար), մեկ մակերեսի, մեկ ատամի համար:
- Շապիկներ. 5 տարին մեկ (13+ տարեկան):
- Խորը մաքրում (բերում/արմատի պլանավորում). 24 ամիսը մեկ (տարիքը՝ 13+):
- Անմիջական ամբողջական պրոթեզներ. 1՝ կամարի համար, ողջ կյանքի ընթացքում:
- Ամբողջական և մասնակի պրոթեզներ. 5 տարին մեկ՝ մեկ կամարով:
- Ատամաշարի վերանորոգում. տարեկան 2 անգամ, մեկ կամարի կամ մեկ ատամի:
- Ատամաշարի շտկում. տարեկան 1 անգամ, մեկ կամարի համար:

## **Հեռավար ատամնաբուժական ծառայություններ**

Հեռավար ատամնաբուժական ծառայություններ ստանալը միջոց է՝ առանց Ձեր ատամնաբույժի հետ նույն ֆիզիկական վայրում գտնվելու: Հեռավար ատամնաբուժությունը կարող է ներառել անձնական և անվտանգ ուղիղ գրույց Ձեր մատակարարի հետ կամ կարող է ներառել Ձեր ատամնաբույժի հետ տեղեկատվության փոխանակում՝ առանց դեմ առ դեմ գրույցի: Ձեր անձնական առողջապահական տեղեկությունները չեն կարող փոխանցվել՝ առանց Ձեր թույլտվության և չեն փոխանցվի, եթե գաղտնագրված (պաշտպանված) ձևաչափով չլինեն:

Կարևոր է, որ և՛ Դուք, և՛ Ձեր ատամնաբույժը համաձայնեք, որ Հեռավար ատամնաբուժության օգտագործումը որոշակի ծառայության համար հարմար է Ձեզ համար: Դուք կարող եք կապվել Ձեր ատամնաբույժի հետ՝ իմանալու, թե որ տեսակի ծառայությունները կարող են հասանելի լինել հեռավար ատամնաբուժության միջոցով: Եթե Դուք հեռավար ատամնաբուժական ծառայություններ ստանաք, Դուք հնարավորություն կունենաք անձամբ ծառայություններ ստանալ ատամնաբույժից կամ ատամնաբուժական պրակտիկա կամ օգնություն ստանալ՝ կազմակերպելու անձնական ծառայությունների համար ուղեգիր ձեռք բերելու հարցում:

Երբ Դուք օգտվում եք հեռավար ատամնաբուժական ծառայություններից, կարևոր է, որ մատակարարը ինդրի Ձեր տեղեկացված համաձայնությունը (հաստատումը): Հեռավար ատամնաբուժական ծառայությունների համար տեղեկացված համաձայնությունը կարող է ներառել, բայց չսահմանափակվել հետևյալով.

- Ձեզ հնարավորություն տալ օգտվել ծառայություններից դեմ առ դեմ կամ հեռավար ատամնաբուժության միջոցով:
- Ձեզ տեղեկություններ տրամադրել հեռավար ատամնաբուժական ծառայությունների տեսակների մասին, որոնք կօգտագործվեն, ինչպես նաև մատակարարների հետ էլեկտրոնային հաղորդակցություններին արձագանքելու ընթացակարգերի մասին:
- Հեռավար ատամնաբուժության ծառայություններից օգտվելիս անձնական առողջական



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

տվյալների գաղտնիության և անվտանգության հետ կապված խնդիրներ կամ ռիսկեր:

- Հեռավար ատամնաբուժության ծառայությունների միջոցով մատուցվող ատամնաբուժական ծառայությունների մատչելիության և նպատակահարմարության սահմանափակումները:

Կարևոր է նշել, որ ոչ բոլոր իրավիճակներն են համապատասխանում հեռավար ատամնաբուժական ծառայությունների համար, և մատակարարները պետք է իմանան Ձեր առողջության պատմությունը և ավարտեն Ձեր բերանի խոռոչի խնդրի գնահատումը, նախքան որևէ խնամք տրամադրելը, ներառյալ դեղատոմսեր գրելը: Բոլոր դեղատոմսերը պետք է համապատասխանեն Ձեր բերանի խոռոչի խնդիրը բուժելու և Կալիֆորնիա նահանգի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանելու համար:

## **Արտակարգ իրավիճակ չհամարվող բժշկական փոխադրումներ**

Դուք իրավունք ունեք օգտագործել արտակարգ իրավիճակ չհամարվող բժշկական փոխադրում (Non-Emergency Medical Transportation, NEMT), երբ Դուք ֆիզիկապես կամ առողջական պատճառներով ի վիճակի չեք հասնել Ձեր բժշկական ժամադրությանը ավտոմեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով, և ծրագիրը վճարում է Ձեր ատամնաբուժական խնդրի համար:

NEMT-ն շտապ օգնության մեքենա է, միկրոավտոբուս, անվասայլակի միկրոավտոբուս կամ օդային փոխադրամիջոց: NEMT-ն ավտոմեքենա, ավտոբուս կամ տաքսի չէ: LIBERTY-ն թույլ է տալիս ամենացածր գնով NEMT տեսակը Ձեր ատամնաբուժական կարիքների համար, երբ կարիք ունեք հասնելու Ձեր ժամադրությանը:

Դա նշանակում է, օրինակ, եթե Դուք ֆիզիկապես կամ բժշկական առումով կարող եք տեղափոխվել անվասայլակով մեքենայով, LIBERTY-ն չի վճարի շտապօգնության մեքենայի համար: Դուք իրավունք կունենաք օգտվել օդային փոխադրամիջոցից, եթե Ձեր առողջական խնդիրն անհնար է դարձնում ցամաքային որևէ փոխադրամիջոցի օգտագործումը:

NEMT-ն պետք է օգտագործվի, երբ.

- Ֆիզիկապես կամ առողջական խնդրի պատճառով անհրաժեշտ է, ինչպես դա որոշվել է բժշկի գրավոր դեղատոմսով:
- Դուք ֆիզիկապես կամ առողջական խնդրի պատճառով չեք կարող օգտվել ավտոբուսից, տաքսիից, ավտոմեքենայից կամ միկրոավտոբուսից, որպեսզի գնաք Ձեր ժամադրությանը,
- Նախապես հաստատված է LIBERTY-ի կողմից՝ բժշկի գրավոր դեղատոմսով:

NEMT խնդրելու համար զանգահարեք LIBERTY՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039 հեռախոսահամարներով՝ Ձեր ժամադրությունից առնվազն տասը (10) աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ: Հրատապ ժամադրությունների համար զանգահարեք հնարավորինս շուտ: Չանգահարելիս խնդրում ենք պատրաստ ունեցեք Ձեր անդամի ID քարտը:

### *NEMT- ի սահմանափակումներ*

Չկան սահմանափակումներ NEMT ստանալու LIBERTY-ով նախատեսված ատամնաբուժական ժամադրություններից կամ դրանից հետո, երբ մատակարարը դա Ձեզ համար նշանակել է:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

**Ի՞նչ չի կիրառվում:**

Եթե Ձեր ֆիզիկական և առողջական վիճակը թույլ է տալիս հասնել Ձեր հանդիպմանը մեքենայով, ավտոբուսով, տաքսիով կամ փոխադրման այլ հեշտությամբ մատչելի եղանակով: Փոխադրամիջոցը չի տրամադրվի, եթե LIBERTY-ն չապահովագրի ծառայությունը: Ապահովագրված ծառայությունների ցանկը կարելի է գտնել անդամի այս տեղեկագրքում:

**Արժեքն անդամի համար**

Ծախս չկա, երբ LIBERTY-ն թույլատրում է փոխադրումը:

**Բժշկական չհամարվող փոխադրում**

Դուք կարող եք բժշկական չհամարվող փոխադրումից (Non-Medical Transportation, NMT) օգտվել, եթե Դուք.

- Ձեր մատակարարի կողմից նշանակված և LIBERTY-ի կողմից ապահովագրված ծառայության համար ճամփորդում եք ժամադրության և հետ եք վերադառնում:

LIBERTY-ն առաջարկում է անվճար փոխադրում դեպի Ձեր ատամնաբուժական տեսակցությունը ծրագրով ապահովագրված ատամնաբուժական ծառայությունների համար: NMT ծառայություններ ինդիելու համար զանգահարեք LIBERTY՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039՝ Ձեր ժամադրությունից առնվազն տասը (10) աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ կամ զանգահարեք որբան հևարավոր է շուտ, երբ հրատապ ժամադրություն ունեք:

Խնդրում ենք պատրաստ ունենալ Ձեր անդամի ID համարը, երբ զանգահարեք: Փոխադրումը չեղարկելու կամ վերապլանավորելու համար ինդրում ենք հևարավորիևս շուտ զանգահարել մեզ:

**NMT-ի սահմանափակումները**

NMT ստանալու սահմանափակումներ չկան LIBERTY-ի ներքո գտնվող ատամնաբուժական ժամադրություններից կամ դրանցից հետո, երբ մատակարարը դա Ձեզ նշանակել է:

**Ի՞նչ չի կիրառվում:**

NMT չի կիրառվում, եթե

- Շտապ օգնության մեքենան, միկրոավտոբուսը, անվասայլակով միկրոավտոբուսը կամ NEMT-ի այլ ձևերը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են ապահովագրված ծառայություններ ստանալու համար:
- LIBERTY-ն չի ապահովագրում ծառայությունը: Ապահովագրված ծառայությունների ցանկը կարելի է գտնել անդամի այս տեղեկագրքում:

**Արժեքն անդամի համար**

LIBERTY-ի կողմից տրամադրված փոխադրումն անվճար է:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## Ինչ չի ապահովագրում Ձեր առամաբուժական ծրագիրը

Medi-Cal Dental-ը չի ապահովագրում այս առամաբուժական ծառայությունները 21 տարեկանից բարձր տարիքի անձանց համար.

- Ծենապակե պսակներ բարձր ազնիվ մետաղով (ոսկի):
- Բուժգործողություններ, որոնք համարվում են «համընդհանուր» կամ «ներառական»՝ չապահովագրված նպաստով:
- Եկուս բազային մասնակի պրոթեզներ:
- Օրթոդոնտիկ բուժում (բրեկետներ):
- Վերականգնողական և շապիկի ծառայությունները, երբ առամի կանխատեսումը կասկածելի է ոչ վերականգնողականության կամ պարոդոնտի ներգրավման պատճառով:
- Վերականգնողական և շապիկի ծառայությունները, որոնք տրամադրվում են բացառապես մաշվածության, քայքայման, էրոզիայի կամ կոսմետիկ նպատակներով կորած առամի կառուցվածքը փոխարինելու համար:
- Խորը մաքրում, երբ ռենտգենյան ճառագայթները ցույց չեն տալիս ոսկորների զգալի կորուստ:
- Մետաղական հիմքով մասնակի պրոթեզներ, եթե մեկ այլ կամարի վրա տեղադրված կամ բուժման կարիք ունեցող առամաշար չկա:
- Ֆիքսված մասնակի պրոթեզներ (կամուրջ), եթե բացառիկ առողջական խնդիրներ չկան:
- Իմպլանտներ և իմպլանտներին առնչվող ծառայություններ, եթե բացառիկ առողջական խնդիրներ չկան:

Բացառիկ առողջական խնդիրները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

- Բերանի խոռոչի քաղցկեղ, որը պահանջում է արևատիվ վիրահատություն և/կամ ճառագայթում, որը հանգեցնում է ավելուլային ոսկրերի ոչնչացմանը, որտեղ բացակայող ոսկրային կառուցվածքները չեն կարողանում պահել սովորական շարժական մասնակի առամաշարը:
- Ստորին ծնոտի և/կամ վերին ծնոտի լուրջ ատրոֆիա, որը հնարավոր չէ շտկել վեստիբուլյար երկարաձգման կամ ոսկրերի մեծացման բուժգործողություններով, և հիվանդը չի կարողանում օգտագործել սովորական պրոթեզները:
- Կմախքի դեֆորմացիաներ, որոնք բացառում են սովորական հեռացվող մասնակի առամաշարի օգտագործումը (ինչպիսիք են արթրոգրիպոզը, Էկտոդերմալ դիսպլազիան, մասնակի անոդոնցիան և կլեիդոկրանիալ դիսպլազիան):
- Ծնոտի, դեմքի կամ գլխի տրավմատիկ դեստրուկցիա, որտեղ մնացած ոսկրային կառուցվածքները չեն կարողանում պահել սովորական շարժական մասնակի առամաշարը:
- Առողջական խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս հիվանդին օգտագործել սովորական շարժական մասնակի առամաշար, ներառում են.
  - Էպիլեպտիկ հիվանդներ, որտեղ շարժական մասնակի առամաշարը կարող է լուրջ վնասվածքներ պատճառել անվերահսկելի նոպաների ժամանակ:
  - Պարապլեգիկ հիվանդներ, ովքեր օգտագործում են բերանի փայտիկ՝ ցանկացած աստիճանի գործելու համար, և որտեղ բերանի փայտիկը չի գործում բնական առամների բացակայության պատճառով:
  - Նյարդաբանական խանգարումներ ունեցող հիվանդներ, որոնց ձեռքի արագաշարժությունը խանգարում է շարժական մասնակի առամաշարի պատշաճ ինսամբին և պահպանմանը:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

Սակրամենտո կամ Լոս Անջելես վարչաշրջաններից դուրս տրամադրվող ատամնաբուժական ծառայությունները չեն ապահովագրվում, եթե արտակարգ իրավիճակ չկա: Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք հավելյալ տեղեկություններ ստանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, գանգահարեք Medi-Cal Dental՝ 800-322-6384 (TTY 800-735-2922) հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև այցելել Medi-Cal Dental Program-ի կայքէջ՝ <https://smilecalifornia.org/>:

## Ծառայություններ, որոնք չեք կարող ստանալ LIBERTY-ի կամ Medi-Cal-ի միջոցով

Կան որոշ ծառայություններ, որոնք ո՛չ LIBERTY-ն, ո՛չ Medi-Cal-ը չեն կարող ապահովագրել, այդ թվում՝

- Կալիֆորնիայի մանկական ծառայություններ (CCS):
- Ոչ ատամնաբուժական ծառայություններ:
- Ցանկացած ատամնաբուժական ծառայություն, որը չի ապահովագրվում Medi-Cal Dental Program-ի կողմից:
- Ատամնաբուժական ծառայություններ, որոնք սկսվել են ծրագրի կողմից ապահովագրվելուց առաջ կամ ապահովագրությունը դադարեցվելուց հետո
- Ատամնաբուժական ծառայություններ, բուժգործողություններ, սարքավորումներ կամ վերականգնումներ՝ բունբաժնոտային հոդի դիսֆունկցիան (Temporomandibular Joint Dysfunction, TMJ) բուժելու համար:
- Ատամնաբուժական ծառայություններ, որոնք որոշվում են, որ կոսմետիկ նպատակներով են արվում հիմնված մասնագիտական վերանայման վրա:
- Ատամնաբուժական ծառայություններ, որոնք համարվում են, որ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չեն՝ մասնագիտական վերանայման հիման վրա:
- Ատամնաբուժական ծառայություններ՝ վերականգնելու ատամի կառուցվածք, որը խախտվել է մաշվելու, էրոզիայի, հնացման կամ քայքայման պատճառով:
- Ատամնաբուժական ծառայություններ կամ սարքավորումներ, որոնք տրամադրվում են ատամնաբույժի կողմից, ով մասնագիտացած է պրոթեզավորման ծառայություններում:
- Ատամնաբուժական ծառայությունները երրորդ սեղանատամների (իմաստության ատամներ) հեռացման համար, որոնք քայքայման լուրջ նշաններ, անդառնալի ցավ և վարակ չունեն և/կամ չեն արգելում այլ ատամների դուրս գալը:
- Ատամնաբուժական ծառայություններ, որոնք կփոխեն ատամների միավորման ձևը՝ կծելու և ծամելու համար:
- Ցանկացած ատամնաբուժական ծառայություն, որը կատարվում է Ձեզ նշանակված PCD-ի կամ մասնագետից դուրս, բացառությամբ այն դեպքերի, երբ ուղղակիորեն լիազորված է LIBERTY-ի կողմից:
- Ցանկացած սովորական ատամնաբուժական ծառայություն, որն իրականացվում է ատամնաբույժի կամ մասնագետի կողմից՝ ստացիոնար/ամբուլատոր հիվանդանոցային պայմաններում:

Հավելյալ տեղեկություններ ստանալու համար կարդացեք բոլոր բաժինները ստորև: Կամ գանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855- 8039 հեռախոսահամարներով:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ գանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## Կալիֆորնիայի մանկական ծառայություններ (CCS)

CCS-ը պետական ծրագիր է, որը բուժում է 21 տարեկանից ցածր երեխաների, ովքեր որոշակի առողջական խնդիրներ, հիվանդությունների կամ քրոնիկական առողջական խնդիրներ ունեն և որոնք բավարարում են CCS ծրագրի կանոնները: Եթե LIBERTY-ն կամ Ձեր PCD-ն կարծում են, որ Ձեր երեխան CCS վիճակ ունի, նա կուղեգրվի CCS ծրագրին:

CCS ծրագրի աշխատակիցները կորոշեն, թե արդյոք Ձեր երեխան համապատասխանում է CCS ծառայություններ ստանալու պահանջներին: Եթե Ձեր երեխան համապատասխանի այս տեսակի խնամք ստանալու պահանջներին, CCS-ի մատակարարները նրան կբուժեն CCS խնդրի համար: LIBERTY-ը կշարունակի ապահովագրել ատամնաբուժական ծառայությունների այն տեսակները, որոնք կապ չունեն CCS խնդրի հետ, ինչպիսիք են ստուգումները, մաքրումները և հետբուժական այցելությունները:

LIBERTY-ը չի ապահովագրում CCS ծրագրի կողմից տրված խնամքը: Որպեսզի CCS-ը ապահովագրի այս խնդիրները, CCS-ը պետք է հաստատի մատակարարին, ծառայությունները և սարքավորումները:

CCS-ը չի ապահովագրում բոլոր խնդիրները: CCS-ն ընդգրկում է այն խնդիրների մեծ մասը, որոնք անհրաժեշտ են ֆիզիկապես հաշմանդամ անդամագրված անդամներին կամ որոնք պետք է բուժվեն դեղերով, վիրահատությամբ կամ վերականգնողական (վերականգնողական) միջոցով: CCS-ն ապահովագրում է այն երեխաներին, որոնք ունեն հետևյալ խնդիրները.

- Սրտի բնածին արատ
- Քաղցկեղներ
- Ուռուցքներ
- Հեմոֆիլիա
- Մանգաղաբջջային սակավարյունություն
- Վահանագեղձի խնդիրներ
- Շաքարախտ
- Երիկամային լուրջ քրոնիկական խնդիրներ
- Լյարդի հիվանդություն
- Աղիքային հիվանդություն
- Գայլի շրթունք/երախ
- Սպինա բիֆիդա
- Լսողության կորուստ
- Կատարակտ
- Մանկական ուղեղային կաթված
- Անկառավարելի նոպաներ
- Ռևմատոիդ հոդաբորբ
- Մկանային դիստրոֆիա
- ՁԻՎՀ
- Գլխի, ուղեղի կամ ողնաշարի ծանր վնասվածքներ
- Ծանր այրվածքներ
- Խիստ շեղված ատամներ

Նահանգը վճարում է CCS ծառայությունների համար: Եթե Ձեր երեխան իրավունակ չէ CCS ծրագրի ծառայությունների համար, նա LIBERTY-ից կշարունակի ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

օգնություն:

CCS-ի մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով:

## Այլ ծրագրեր և ծառայություններ Medi-Cal ունեցող մարդկանց համար

Կարդացեք ստորև բերված բաժիններից յուրաքանչյուրը՝ Medi-Cal ունեցող մարդկանց համար այլ ծրագրերի և ծառայությունների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար: Անդամներն ու մատակարարները կարող են ավելի շատ տեղեկատվություն ստանալ առկա ծրագրերի, ծառայությունների և ռեսուրսների մասին՝ այցելելով՝ <https://www.dhcs.ca.gov/services/Pages/Medi-CalDenti-Cal.aspx>:

## LIBERTY-ի Community Smiles Program

LIBERTY-ի Community Smiles Program-ն անվճար, ինքնաուղղորդման ծրագիր է՝ մեր անդամներին համայնքի ռեսուրսների հետ կապակցելու համար:

Դուք կարող եք Community Smile Program-ից օգտվել անվճար կամ Էժան ծառայություններ ստանալու համար, ինչպիսիք են սնունդը, առողջապահական ինսամբը, կացարանը, անձնական ապահովությունը, փոխադրումը և կրթությունը:

Եթե ցանկանում եք Ձեր տարածքում մատչելի ռեսուրսներ փնտրել, Ձեր սմարթֆոնով սկանավորեք ստորև տրված QR կոդը կամ այցելեք LIBERTY-ի կայքէջը՝ <https://communityresources.libertydentalplan.com>:



## LIBERTY-ի Healthy Behaviors Program

LIBERTY-ի Healthy Behaviors Program-ը (Առողջ վարքագծի ծրագիր) խրախուսական ծրագիր է Medi-Cal-ի 0-ից 20 տարեկան անդամների համար, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում չեն այցելել ատամնաբույժի: LIBERTY-ի անդամները՝ և չափահասները, և՛ երեխաները, ովքեր անձամբ ծրագրեն և ավարտեն հանդիպում իրենց նշանակված PCD-ի հետ, \$25.00 նվեր քարտ ստանալու իրավունք կունենան:

Ձեր հաջորդ ատամնաբուժական տեսակցությունը խնդրելու համար սկանավորեք ստորև նշված QR կոդը Ձեր սմարթֆոնի տեսախցիկով, որպեսզի ժամադրություն նշանակեք, որը լավագույնս կլինի Ձեզ համար:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:





Medi-Cal-ի միջոցով հասանելի լրացուցիչ ծրագրերից մի քանիսը ներառում են.

- **Medi-Cal հրաժարումներ.** Ծրագիր, որը լրացուցիչ ծառայություններ է մատուցում անհատների որոշակի խմբերի, սահմանափակ ծառայություններ՝ որոշակի աշխարհագրական տարածքներում և բժշկական ապահովագրություն է տրամադրում այն անձանց, ովքեր այլապես կարող են իրավունակ չլինել Medi-Cal-ի համար:
- **Medicare Part D դեղատոմսով դեղերի ծրագիր.** Օրենք, որը ներառում է դեղատոմսով դեղերի նպաստ Medicare Part D-ի անդամների համար:
- **Տեսողության ինսամքի ծրագիր.** Առողջության նպաստ, որն ապահովագրում է Medi-Cal-ի ներքո իրավունակ անդամների մեծամասնությանը:

## Նպաստների համակարգում

LIBERTY-ն առաջարկում է անվճար ծառայություններ, որոնք կօգնեն Ձեզ համակարգել Ձեր ատամնաբուժական ինսամքի կարիքները: Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք Ձեր ատամնաբուժական ինսամքի կամ Ձեր երեխայի ատամնաբուժական ինսամքի վերաբերյալ, զանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039 հեռախոսահամարներով:

Նպաստների համակարգումը կիրառվում է, երբ Դուք ապահովագրված եք 1-ից ավելի առողջապահական ծրագրերով: Եթե Դուք ապահովագրված եք միայն LIBERTY-ի միջոցով, կարիք չկա անհանգստանալ նպաստների համակարգման մասին: Կարևոր է նշել, որ Դուք դեռ իրավունակ եք ապահովագրված ծառայությունների համար Ձեր Medi-Cal ծրագրի շրջանակներում, նույնիսկ եթե ապահովագրված եք մեկ այլ առողջապահական ծրագրով:

Օրենքի համաձայն, LIBERTY-ի միջոցով Ձեր Medi-Cal-ի ապահովագրությունը վերջին ատյանի վճարողն է: Սա նշանակում է, որ Ձեր մյուս առողջապահական ծրագիրը նախ պետք է վճարի ապահովագրված ծառայությունների Ձեր հայցերի համար, իսկ Ձեր Medi-Cal-ի ապահովագրությունը LIBERTY-ով կվճարի ապահովագրված ծառայությունների Ձեր հայցերի համար: LIBERTY-ն չի վճարի չապահովագրված ծառայությունների հայցերի համար:

Այլ առողջապահական ծրագրի ապահովագրության օրինակները ներառում են.

- Խմբային առողջապահական ծրագրեր
- Ինքնաապահովագրության ծրագրեր
- Կառավարվող ինսամքի կազմակերպություններ
- Medicare
- Դատարանի որոշմամբ սահմանված առողջական ապահովագրություն



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## 50| Նպաստներ ۞ ծառայություններ

- Պատասխանատվության ապահովագրության վճարներ ապահովագրողից
- Դեղատների նպաստների կառավարիչներ
- Երկարատև ինսամքի ապահովագրություն
- Աշխատողների փոխհատուցում
- Նահանգային կամ դաշնային ապահովագրության այլ ծրագրեր (եթե բացառված չեն օրենքով)

Համոզվեք, որ Ձեր PCD-ին կամ այլ մատակարարների տեղեկացնեք, եթե ի լրումն Medi-Cal-ի Ձեր նպաստների, ունեք առողջապահական ապահովագրություն: Սա կօգնի մեր մատակարարին հայցերը ճիշտ առողջապահական ծրագրին ուղարկել և կխուսափի Ձեր պահանջների վճարման հետաձգումից:

Եթե Նպաստների համակարգման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք, զանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), կամ TTY` 877-855- 8039 հեռախոսահամարներով:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ` 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY` 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին` 711: Այցելեք առցանց` [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

# 5. Երեխաների և դեռահասների կանխարգելիչ բնույթի ատամնաբուժական ծառայություններ

LIBERTY-ն 21 տարեկանից ցածր երեխաներին և դեռահասներին ավտոմատ կերպով տրամադրում է ատամնաբուժական ծառայություններ՝ ապահովելու, որ նրանք ստանան ճիշտ կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ: Այս գլուխը բացատրում է այս ծառայությունները:

## Ատամնաբուժական ստուգումներ

Ձեր երեխայի լնդերը մաքուր պահեք՝ ամեն օր նրբորեն սրբելով լնդերը լաթով: Մոտավորապես 4-6 ամսականում «ծկթում» կսկսվի, երբ կաթնատամներն սկսեն դուրս գալ: Դուք պետք է ժամադրություն ձեռք բերեք Ձեր երեխայի առաջին ատամնաբուժական այցի համար, երբ դուրս գա նրա առաջին ատամը կամ նրա ծննդյան առաջին տարեդարձին, որն առաջինը տեղի ունենա: Medi-Cal-ի հետևյալ ատամնաբուժական ծառայություններն անվճար կամ էժան ծառայություններ են հետևյալ տարիքային խմբերի համար.

1-ից 4 տարեկան մանկահասակ երեխաներ.

- Երեխայի առաջին ատամնաբուժական այցը
- Երեխայի առաջին ատամնաբուժական զննումը
- Ատամնաբուժական զննումները (յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, ծնվելուց մինչև 3 տարեկան՝ 3 ամիսը մեկ)
- Ռենտգենյան ճառագայթներ
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Ֆտորով բուժում (6 ամիսը մեկ անգամ)
- Պլոմբներ
- Ատամի հեռացում
- Արտակարգ իրավիճակի ծառայություններ



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## 52 | Երեխաների ֆ դեռահասների կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ

- Հանգստացնող միջոցներ (եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է)

5-ից 12 տարեկան երեխաներ.

- Ատամնաբուժական զննումներ (6 ամիսը մեկ անգամ)
- Ռենտգենյան ճառագայթներ
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Ֆտորով բուժում (6 ամիսը մեկ անգամ)
- Սեղանատամի հերմետիկ նյութեր
- Պլոմբներ
- Արմատախողովակների բուժում
- Ատամի հեռացում
- Արտակարգ իրավիճակի ծառայություններ
- Հանգստացնող միջոցներ (եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է)

13-ից 17 տարեկան երեխաներ.

- Ատամնաբուժական զննումներ (6 ամիսը մեկ անգամ)
- Ռենտգենյան ճառագայթներ
- Ֆտորով բուժում (6 ամիսը մեկ անգամ)
- Ատամների մաքրում (6 ամիսը մեկ անգամ)
- Օրթոդոնտիկա (բրեկետներ) նրանց համար, ովքեր իրավունք ունեն:
- Պլոմբներ
- Շապիկներ
- Արմատախողովակների բուժում
- Մասնակի և ամբողջական պրոթեզներ
- Լնդերի տակի գոյացումների մաքրում և արմատների քերում
- Ատամի հեռացում
- Արտակարգ իրավիճակի ծառայություններ
- Հանգստացնող միջոցներ (եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է)

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք հավելյալ տեղեկություններ ստանալ Medi-Cal Dental -ի ապահովագրված ատամնաբուժական ծառայությունների մասին, կարող եք զանգահարել 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ համարին՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: Կարող եք նաև այցելել LIBERTY-ի կայքէջը՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## Օգնություն երեխաների ֆ դեռահասների կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ ստանալու հարցում

LIBERTY-ը կօգնի մինչև 21 տարեկան անդամներին ստանալ իրենց անհրաժեշտ ծառայությունները: LIBERTY-ը կարող է.

- Տեղեկություններ տրամադրել ծառայությունների մասին:
- Գտնել մատակարարներ:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

### 53| Երեխաների ֆ դեռահասաների կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ

- Պայմանավորվածություններ ձեռք բերելու համար
- Ապահովել ինամքի համակարգում ճիշտ ինամք ստանալու համար, նույնիսկ եթե LIBERTY-ն պատասխանատվություն չի կրում այդ ինամքի համար վճարելու համար:

## Վաղ ֆ պարբերական զննում, ախտորոշիչ ֆ բուժման ծառայություններ (EPSDT)

Medi-Cal-ի 21 տարեկանից ցածր անդամները իրավունակ են EPSDT ծառայությունների համար: EPSDT ծրագրի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր երեխա ստանա իրեն անհրաժեշտ ինամքը, երբ դրա կարիքն ունի:

Medi-Cal Dental ծրագիրը տրամադրում է անվճար ծառայություններ՝ երեխայի ծննդից մինչև 21 տարեկան առողջ պահելու համար: (1) ատամնաբուժական ծառայություններ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են և ապահովագրվում են Medicaid-ի կողմից, բայց չեն հանդիսանում ընթացիկ Medi-Cal Dental ծրագրի մաս, (2) ատամնաբուժական ծառայություններ, որոնք անհրաժեշտ են ավելի հաճախ, քան Medi-Cal Dental ծրագրի կողմից թույլատրված հաճախականությունը, և (3) ատամնաբուժական ծառայություններ, որոնք ներառում են ցավի և վարակի թեթևացում, ատամների վերականգնում և ատամների առողջության պահպանում:

Այս դեպքերում անդամը կարող է իրավունակ լինել EPSDT նպաստների համար, երբ PCD-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատում են անդամի առողջական խնդիրը շտկելու կամ բարելավելու բժշկական անհրաժեշտությունը:

Ձեր PCD-ն պետք է նախապես հաստատման հարցում ներկայացնի LIBERTY-ին՝ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով, որոնք կաջակցեն EPSDT-ի շրջանակներում ծառայությունների անհրաժեշտությանը: LIBERTY-ն Ձեզ գրավոր պատասխան կտրամադրի, եթե մենք մերժենք EPSDT նպաստների խնդրանքը, Դուք իրավունք ունեք բողոքարկել մեր որոշումը: Բողոքարկման գործընթացի մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցում կատարեք այս տեղեկագրի Գլուխ 8-ի «խնդիրների զեկուցում և լուծում» բաժինը:

Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ EPSDT-ի մասին, խնդրում ենք այցելել DHCS Medi-Cal for Kids & Teens-ի կայքէջը՝ [www.dhcs.ca.gov/services/Medi-Cal-For-Kids-and-Teens/Pages/home.aspx](http://www.dhcs.ca.gov/services/Medi-Cal-For-Kids-and-Teens/Pages/home.aspx):



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

# 6. Իրավունքներ և պարտականություններ

Որպես LIBERTY-ի անդամ՝ Դուք ունեք որոշակի իրավունքներ և պարտականություններ: Այս գլխում բացատրություն կտրվի այդ իրավունքների և պարտականությունների մասին: Այս գլուխը նաև կտրամադրի իրավական ծանուցումներ, որոնց իրավունքը Դուք ունեք՝ որպես LIBERTY-ի անդամ:

## Ձեր իրավունքները

LIBERTY-ի անդամներն ունեն հետևյալ իրավունքները.

- Հարգալից վերաբերմունք ստանալ՝ հաշվի առնելով Ձեր գաղտնիության իրավունքը և Ձեր բժշկական և ատամնաբուժական տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտությունը:
- Ծրագրի և դրա ծառայությունների, ներառյալ ապահովագրված ծառայությունների, ատամնաբուժական մատակարարների և անդամների իրավունքների/պարտականությունների մասին տեղեկատվություն ստանալ:
- Կարողանալ ընտրել PCD կամ մասնագետ LIBERTY-ի ցանցում:
- Մասնակցել Ձեր ատամնաբուժական խնամքի վերաբերյալ որոշումների ընդունմանը, ներառյալ՝ բուժումից հրաժարվելու իրավունքը:
- Մասնակցել LIBERTY-ի համայնքային խորհրդատվական հանձնաժողովին և առաջարկություններ ներկայացնել:
- LIBERTY-ի կամ ստացած խնամքի վերաբերյալ բողոքներ հայտնել, բանավոր կամ գրավոր եղանակով:
- Բանավոր կամ գրավոր բողոքարկում ինդիքել LIBERTY-ի կողմից կայացված որոշման վերաբերյալ, որն ի օգուտ Ձեզ չի եղել:
- Ստանալ Ձեր լեզվով բանավոր թարգմանչի ծառայություններ:
- Ստանալ անդամին ուղղված գրավոր տեղեկատվության լիարժեք թարգմանված տարբերակը Ձեր նախընտրած լեզվով, ներառյալ՝ բողոքների և բողոքարկման ծանուցումները:
- Ծրագրի ցանցից դուրս Դաշնային որոկավորված առողջապահական կենտրոններից, հնդկացիների առողջության ծառայության հաստատություններից և շտապ օգնության ծառայություններից օգտվելու մուտք ունենալ:
- Նահանգային լսումներ պահանջել, եթե ծառայությունը կամ նպաստը մերժվել է, և Դուք արդեն բողոքարկել եք LIBERTY-ին, և գոհ չեք մեր որոշումից, կամ եթե մենք Ձեզ որոշում չենք տրամադրել 30 օրվա ընթացքում, ներառյալ տեղեկատվություն արագացված լսում կազմակերպելու հնարավոր հանգամանքների մասին:
- Մուտք գործել և օրենքով նախատեսված դեպքերում ստանալ Ձեր ատամնաբուժական գրառումների պատճենները, փոփոխությունները կամ ուղղել Ձեր ատամնաբուժական գրառումները, ինչպես սահմանված է օրենքով:
- Դիմումի հիման վրա դուրս գալ LIBERTY-ից կամ Medi-Cal-ից:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## 55 | Իրավունքներ ֆ պարտականություններ

- Անվճար ստանալ անդամների գրավոր տեղեկություններ և նյութեր այլ ձևաչափերով (ներառյալ բրայլյան, խոշոր տպագիր և աուդիո ձևաչափ և մատչելի էլեկտրոնային ձևաչափեր) Ձեր պահանջի հիման վրա և համապատասխան ձևաչափի համար անհրաժեշտ ժամանակահատվածում համաձայն W&I օրենսգրքի 14182 (b)(12) հոդվածի:
- Ձեր խնամքի վերաբերյալ որոշում կայացնելիս զերծ մնալ ցանկացած հետևանքներից, զսպվածությունից կամ մեկուսացումից, որոնք օգտագործվում են որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարության կամ վրեժխնդրության միջոց:
- Ստանալ բուժման մատչելի տարբերակների և այլընտրանքների մասին տեղեկատվություն, որը ներկայացված Ձեր առողջական խնդրին և հասկանալու կարողությանը համապատասխան ձևով, անկախ ծախսերի կամ նպաստների ապահովագրությունից:
- Ստանալ տեղեկացված համաձայնություն, երբ բուժում եք ստանում ապահովագրված և չապահովագրված ծառայությունների համար:
- Ստանալ ախտորոշման և բուժման ճշմարիտ գրավոր ծրագիր (ատամի խնդրի նկարագրությունը և առաջարկվող ծառայությունները):
- Ստանալ տեղեկատվություն արտակարգ իրավիճակի խնամքի սահմանումների վերաբերյալ, եթե ունեք կյանքին սպառնացող հիվանդություն կամ վնասվածք:
- Հանդիպում ունենալ, երբ դա Ձեզ անհրաժեշտ է:
- Նախնական հրահանգներ ձևակերպել:
- Մուտք գործել անչափահասների համաձայնության ծառայություններին:
- Երկրորդ կարծիք խնդրել՝ անվճար:
- Խնամքի շարունակականություն խնդրել, եթե Ձեր ատամնաբույժը դուրս է եկել LIBERTY-ի ցանցից:
- Իմանալ և հասկանալ, թե ինչու է LIBERTY-ն մերժել, հետաձգել կամ սահմանափակել ծառայությունը կամ բուժումը:
- Խնդրել անկախ բժշկական վերանայում (IMR), եթե LIBERTY-ն մերժել է, փոփոխել կամ հետաձգել է Ձեր ատամնաբուժական ծառայությունները կամ բուժումը:
- Մուտք ունենալ LIBERTY-ի առողջապահական կրթական ծրագրերին և բարելավել ատամների առողջական վիճակը:
- Ստանալ անվճար իրավաբանական օգնություն Ձեր տեղական իրավաբանական օգնության գրասենյակում կամ այլ խմբում:
- Ազատություն ունենալ օգտվելու այս իրավունքներից՝ առանց Ձեր նկատմամբ LIBERTY-ի, ատամնաբուժական մատակարարների կամ նահանգի կողմից բացասական վերաբերմունքի արժանանալու:

## Ձեր պարտականությունները

LIBERTY-ի անդամներն ունեն հետևյալ պարտականությունները.

- Կարդալ Ձեր՝ Անդամի տեղեկագիրքը:
- Օգտագործել Ձեր Medi-Cal BIC և LIBERTY ID քարտերը, երբ գնում եք Ձեր ժամադրության կամ ծառայություններ եք ստանում:
- Թույլ չտալ այլ մարդկանց օգտագործել Ձեր Medi-Cal BIC և LIBERTY ID քարտերը:
- LIBERTY-ին տեղեկացնել, եթե Ձեր ID քարտը կորել է կամ այն գողացել են:
- Իմանալ Ձեր PCD-ի և գործի կառավարչի անունը, եթե ունեք:
- Իմանալ Ձեր ատամնաբուժական ծրագրի մասին և հասկանալ խնամք ստանալու կանոնները:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

- Ավարտել Ձեր ատամնաբուժական առողջության նախնական նշանակումը (IDHA) Ձեր PCD-ի հետ գրանցումից հետո առաջին 120 օրվա ընթացքում:
- Լրացնել և վերադարձնել OHRA ձևաթուղթը LIBERTY-ին կամ առցանց լրացնել ձևաթուղթը, կամ զանգահարելով Անդամների սպասարկման բաժին՝ անդամագրման առաջին 90 օրվա ընթացքում:
- Բուժումն ավարտել Ձեզ նշանակված PCD-ի կամ մասնագետի մոտ:
- Հարգալից լինել LIBERTY-ի անձնակազմի, Ձեր PCD-ի կամ այլ մատակարարների նկատմամբ, ովքեր Ձեզ խնամք են տրամադրում:
- Հետևելու ատամնաբուժարանի՝ խնամքին և վարվելակերպին վերաբերող բոլոր կանոններին:
- Հետևել մասնագիտական խնամքի ուղեգրման գործընթացին:
- Որքանով որ տեղյակ եք, Ձեր PCD-ին, մասնագետին և LIBERTY-ին տրամադրել ճիշտ տեղեկատվություն Ձեր ֆիզիկական և ատամնաբուժական առողջության մասին:
- Տեղեկացնել Ձեր PCD-ին կամ մասնագետին, եթե Ձեր ֆիզիկական և ատամնաբուժական առողջության մեջ որևէ հանկարծակի փոփոխություն ունենաք:
- Ձեր PCD-ին կամ մասնագետին տեղեկացնել, որ Դուք հասկանում եք բուժման ծրագիրը և այն, ինչ Ձեզնից պահանջվում է:
- Մնալ բուժման ծրագրի հետ, որը Դուք հասկացել եւ համաձայնել եք Ձեր PCD-ի կամ մասնագետի հետ:
- LIBERTY-ին տեղեկացնել Ձեր PCD-ի կամ մասնագետի Ձեր կարիքների և ակնկալիքների մասին:
- Պլանավորեք և պահպանեք Ձեր պլանավորված հանդիպումները Ձեր PCD-ի կամ մասնագետի հետ:
- Ժամանակից շուտ տեղեկացնել Ձեր PCD-ին կամ մասնագետին, եթե չեք կարող կատարել Ձեր պլանավորված հանդիպումները առնվազն 24 ժամ առաջ, կամ եթե պատրաստվում եք ուշանալ:
- Ձեր սեփական գործողությունները, եթե Դուք հրաժարվում եք բուժումից կամ չեք հետևում Ձեր PCD-ի կամ մասնագետի բուժման պլանին, հրահանգներին և խորհուրդներին:
- Հասկանալ Ձեր ատամնաբուժական նպաստները, ներառյալ չապահովագրված ծառայությունները:
- Ձեր ատամնաբուժարանին վճարել որևէ վճար կամ գումար, երբ համաձայնում եք կատարել Ձեր ատամնաբուժական ծրագրում չներառված ծառայությունները:
- Շտապօգնության սենակից օգտվել միայն իրական արտակարգ իրավիճակների դեպքում:
- Տեղեկացնել մեզ Ձեր ցանկացած այլ ապահովագրության մասին, որն ունեք:
- Տեղեկացնել մեզ, եթե Դուք հասցեի, ընտանեկան կարգավիճակի կամ առողջական այլ ապահովագրության փոփոխություն ունեք:
- Տեղեկացնել մեզ, եթե կարծում եք, որ կա մատակարարի խարդախություն/չարաշահում:
- Խարդախության, վատնումների կամ չարաշահումների մասին գեկուցեք LIBERTY -ին կամ Կալիֆորնիայի DHCS-ին:

## Որպես անդամ ներգրավվելու եղանակներ

LIBERTY-ն ցանկանում է լսել Ձեզ: Յուրաքանչյուր եռամսյակ (յուրաքանչյուր 3 ամիսը մեկ) LIBERTY-ն հանդիպումներ է ունենում՝ խոսելու այն մասին, թե ինչն է լավ աշխատում և ինչպես կարող ենք բարելավել: Անդամներին հրավիրում ենք մասնակցել և առաջարկություններ կատարել: Միացեք մեզ և հայտնեք Ձեր կարծիքը:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:



## LIBERTY-ի համայնքային խորհրդատվական հանձնաժողով

Մենք հանձնաժողով ունենք, որը կոչվում է Համայնքային խորհրդատվական (նախկինում հանրային քաղաքականության հանձնաժողով) (CAC): Այս CAC-ը կազմված է Medi-Cal-ի անդամներից, համայնքի շահագրգիռ կողմերից և Ծրագրի աջակցող անձնակազմից: Խումբը տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե ինչպես բարելավել LIBERTY-ի քաղաքականությունը և պատասխանատու է հետևյալի համար.

- Մեթոդների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում մեր անդամներին՝ ավելի լավ ծառայելու համար:
- Անդամների բավարարվածությունն ապահովելու համար որակական չափանիշների վերանայում:
- LIBERTY-ի ծրագրի բարելավումներ առաջարկելը
- LIBERTY-ի ֆինանսական հաշվետվությունների վերանայում



Եթե ցանկանում եք այս խմբի մաս կազմել, կարող եք դիմել՝ օգտագործելով հետևյալից մեկը.

- **QR կոդ.** Սկանավորեք վերոնշյալ QR կոդը:
- **Առցանց.** Անցեք <https://www.libertydentalplan.com/Members/Member-Facing-Committee.aspx>:
- **Էլ. նամակով.** Տպեք և լրացրեք ձևաթուղթը և այն ուղարկեք [QM@libertydentalplan.com](mailto:QM@libertydentalplan.com) էլ. փոստի հասցեին:
- **Փոստով և ֆաքսով.** Լրացրեք այս ձևաթուղթը և վերադարձրեք այն LIBERTY՝ 888-334-6027 ֆաքսի համարով կամ հետևյալ փոստային հասցեով՝

LIBERTY Dental Plan of California  
Quality Management Department  
P.O. Box 26110, Santa Ana, CA 92799-6110

CAC դիմումի ձևաթուղթը կարելի է գտնել այս տեղեկագրի Գլուխ 10-ի «Ձևաթղթեր» բաժնում կամ առցանց, ինչպես վերևում նշվեց:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

# 7. Խտրականության բացառման ծանուցում

Խտրականության ենթարկելը հակասում է օրենքին: LIBERTY-ը հետևում է նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների օրենքներին և ապօրինի խտրականությունն չի դրսևորում չի բացառում մարդկանց կամ այլ կերպ չի վերաբերվում նրանց՝ սեռի, ռասայի, գույնի, կրոնի, ծագման, ազգային պատկանելիության, էթնիկ խմբի նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական խնդրի, գենետիկական տվյալների, ամուսնական կարգավիճակի, սեռի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով:

LIBERTY-ն տրամադրում է.

- Անվճար օժանդակություն և ծառայություններ հաշմանդամ անձանց՝ օգնելու նրանց ավելի լավ հաղորդակցվել, ինչպիսիք են օրինակ՝
  - ✓ Ժեստերի լեզվի որակավորված թարգմանիչներ
  - ✓ Գրավոր տեղեկություններ այլ ձևաչափերով (բրայլյան այբուբենով, խոշոր տպագիր, հասանելի էլեկտրոնային և այլ ձևաչափեր)
- Տրամադրում է անվճար լեզվական ծառայություններ այն անձանց, ում մայրենի լեզուն անգլերենը չէ, այդ թվում՝
  - ✓ Որակավորված բանավոր թարգմանիչներ
  - ✓ Այլ լեզուներով գրված տեղեկատվական նյութեր

Եթե Ձեզ անհրաժեշտ են այս ծառայությունները, կապվեք LIBERTY-ի հետ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից մինչև 17:00՝ զանգահարելով 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) հեռախոսահամարներով: Եթե չեք կարողանում լավ լսել կամ խոսել, խնդրում ենք զանգահարել 877-855-8039 կամ 711 հեռախոսահամարներով՝ Կալիֆորնիայի խոսքի և լսողության



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

# Խնդիրներով անձանց հատուկ ծառայությունից օգտվելու համար:

## ԻՆՉՊԵՍ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Եթե կարծում եք, որ LIBERTY-ն չի տրամադրել այս ծառայությունները կամ ապօրինի կերպով այլ կերպ խտրականություն է դրսևորել սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային պատկանելիության, էթնիկ խմբի նույնականացման, տարիքի, մտավոր հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, բժշկական խնդրի, գենետիկական տվյալների, ամուսնական կարգավիճակի, սեռի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիմքի վրա, կարող եք բողոք ներկայացնել LIBERTY-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողին: Դուք կարող եք բողոք ներկայացնել հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով.

- Հեռախոսով. Կապ հաստատեք LIBERTY-ի Քաղաքացիական իրավունքների համակարգողի հետ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից մինչև 17:00՝ զանգահարելով 888-704-9833 հեռախոսահամարով: Կամ եթե Դուք չեք կարող լավ լսել կամ խոսել խնդրում ենք զանգահարել 877-855-8039 հեռախոսահամարով:
- Գրավոր. Լրացրեք բողոքարկման ձևաթուղթը կամ նամակ գրեք և ուղարկեք այն հետևյալ հասցեով՝

**LIBERTY Dental Plan**  
**Civil Rights Coordinator**  
**P.O. Box 26110**  
**Santa Ana, CA 92799-6110**

- Դիմել անձամբ. Այցելեք Ձեր ատամնաբույժի ընդունարան կամ LIBERTY և ասացեք, որ ցանկանում եք բողոք ներկայացնել:
- Էլեկտրոնային տարբերակով. Այցելեք LIBERTY-ի կայքէջը՝ [www.libertydentalplan.com/Legal/Grievances](http://www.libertydentalplan.com/Legal/Grievances):

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ - ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Դուք կարող եք նաև քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել Կալիֆորնիայի առողջապահության և հանրային ծառայությունների վարչության Քաղաքացիական իրավունքների գրասենյակին՝ հեռախոսով, գրավոր կերպով կամ էլեկտրոնային տարբերակով.

- Հեռախոսով. Չանգահարեք **916-440-7370** հեռախոսահամարով: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել **711 (Telecommunications Relay Service)**:
- Գրավոր. Լրացրեք Նահանգային լսման ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝

**Office of Civil Rights**  
**Department of Healthcare Services**  
**Office of Civil Rights**  
**P.O. Box 997413, MS 0009**  
**Sacramento, CA 95899-7413**

Բողոքների ձևաթղթերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ [www.dhcs.ca.gov/Pages/Language\\_Access](http://www.dhcs.ca.gov/Pages/Language_Access):

- Էլեկտրոնային տարբերակով. Կամ էլ. նամակ ուղարկեք [CivilRights@dhcs.ca.gov](mailto:CivilRights@dhcs.ca.gov) հասցեով:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՎԱԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ - ԱՄՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱԿ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Եթե կարծում եք, որ Ձեր հանդեպ խտրական վերաբերմունք է ցուցաբերվել ելնելով ռասայից, մաշկի գույնից, ազգային պատկանելիությունից, տարիքից, հաշմանդամությունից կամ սեռից, ապա կարող եք նաև քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և հանրային ծառայությունների վարչության Քաղաքացիական իրավունքների գրասենյակին՝ հեռախոսով, գրավոր կերպով կամ էլեկտրոնային տարբերակով.

- Հեռախոսով. Չանգահարեք **800-368-1019** հեռախոսահամարով: Եթե չեք կարող լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել **TTY/TDD 800-537-7697:**
- Գրավոր. Լրացրեք Նահանգային լսման ձևաթուղթը կամ նամակ ուղարկեք հետևյալ հասցեով՝  
**U.S. Department of Health and Human Services**  
**200 Independence Avenue, SW**  
**Room 509F, HHH Building**  
**Washington, D.C. 20201**  
 Բողոքների ձևաթղթերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ [www.hhs.gov/ocr/complaints](http://www.hhs.gov/ocr/complaints):
- Էլեկտրոնային տարբերակով. Այցելեք Քաղաքացիական իրավունքների գրասենյակի բողոքների հարթակ՝ [www.hhs.gov/ocr/complaints](http://www.hhs.gov/ocr/complaints):

**Գաղտնիության գործելակերպերի ծանուցում**

Ատամնաբուժական գրառումների գաղտնիությունը պահպանելու համար LIBERTY-ի քաղաքականությունն ու ընթացակարգերը նկարագրող հայտարարությունը հասանելի է, և այն Ձեզ կտրամադրվի ըստ պահանջի:

Օրենքով սահմանված կարգով այս ծանուցումը վերաբերում է Անձնական առողջապահական տեղեկությունների (Personal Health Information, PHI) հետ կապված Ձեր իրավունքներին, մեր իրավական պարտավորություններին և գաղտնիության գործելակերպերին: Այս ծանուցումը տեղեկացնում է նաև, թե ինչպես ենք մենք հավաքում, օգտագործում, և բացահայտում Ձեր PHI-ը: Մենք պետք է հետևենք ներկայումս ուժի մեջ գտնվող ծանուցման հրահանգներին: Մենք իրավունք ենք վերապահում ժամանակ առ ժամանակ փոփոխություններ մտցնել այս ծանուցման մեջ, որպեսզի փոփոխված ծանուցումը ուժ ունենա մեր մոտ պահվող բոլոր PHI-երի վրա: Ներկայումս գործող գաղտնիության ծանուցումը կարող եք գտնել մեր կայքում՝ [www.libertydentalplan.com/About-LIBERTY/Compliance/HIPAA-Privacy-Notice](http://www.libertydentalplan.com/About-LIBERTY/Compliance/HIPAA-Privacy-Notice) հասցեով:

Չանգահարեք մեր Անդամների սպասարկման բաժին՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից մինչև 17:00՝ սույն ծանուցման գրավոր պատճենը ստանալու համար:

**Ծանուցում օրենքների մասին**

Այս Անդամի տեղեկագրքում շատ օրենքներ են կիրառվում: Այս օրենքները կարող են ազդել Ձեր իրավունքների և պարտականությունների վրա, անգամ եթե այդ օրենքները ներառված կամ բացատրված չեն այս տեղակագրքում: Այս տեղեկագրքին վերաբերող հիմնական օրենքները Medi-Cal ծրագրի վերաբերյալ Նահանգային և դաշնային օրենքներն են: Այլ դաշնային և Նահանգային օրենքներ կարող են նույնպես կիրառվել:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## Ծանուցում Medi-Cal-ի՝ որպես վերջին ատյանի վճարողի վերաբերյալ

Երբեմն մեկ ուրիշը պետք է սկզբում վճարի մեր կողմից Ձեզ տրամադրված ծառայությունների համար: Օրինակ, եթե Դուք արդեն ունեք ապահովագրություն Ձեր գործատուից:

Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների վարչությունը իրավունք և պարտավորություն ունի գումար հավաքագրելու Medi-Cal-ի ապահովագրված ծառայությունների համար, որոնց համար Medi-Cal-ը առաջին վճարողը չէ:

Medi-Cal Dental Program-ը ենթարկվում է նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են երրորդ կողմերի իրավական պարտավորության նպաստառուներին տրամադրված առողջապահական խնամքի համար: Մենք բոլոր ողջամիտ ջանքերը կգործադրենք՝ ապահովելու, որ Medi-Cal-ը վերջին ատյանի վճարողը լինի:

Եթե ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ, ուսումնասիրեք «Նպաստների համակարգում» բաժինը սույն ձեռնարկի Գլուխ 4-ի «Նպաստներն ու ծառայությունները» բաժնի ներքո:

## Նպաստի բացասական որոշման ծանուցում

Մենք պետք է Ձեզ ուղարկենք Նպաստի բացասական որոշման գրավոր ծանուցումը (NABD), որը նաև կոչվում է Գործողությունների ծանուցում (NOA), երբ մենք մերժում, հետաձգում, փոփոխում կամ սահմանափակում ենք պահանջվող ծառայությունների կամ բուժման թույլտվությունը: Սա կարող է ներառել որոշումներ, որոնք կայացվել են բժշկական անհրաժեշտության, համապատասխանության, ծառայության տեսակի կամ մակարդակի, սահմանման կամ փոխհատուցվող ծառայության կամ բուժման արդյունավետության պատճառով:

LIBERTY-ն նաև Ձեզ NABD կուղարկի, եթե մենք կրճատենք, կասեցնենք կամ դադարեցնենք նախկինում հաստատված ծառայությունները, և եթե մենք մերժենք արդեն ավարտված ծառայությունների և բուժման վճարումը: Այն նաև համարվում է NABD, եթե LIBERTY-ն ժամանակին ծառայություններ չմատուցի, եթե մենք չկարողանանք բավարարել բողոքը կամ բողոքարկումը լուծելու համար պահանջվող ժամկետները, մերժենք ֆինանսական պարտավորությունը վիճարկելու Ձեր խնդրանքը կամ եթե մերժենք գյուղական շրջանի անդամի խնդրանքը ցանցից դուրս ծառայություններ մատուցելու համար:

Մենք կորոշենք նախնական սպասարկման բոլոր ստանդարտ հարցումները հենց որ Ձեր առողջական վիճակը պահանջի, բայց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում այն բոլոր տեղեկությունները, որոնք մենք պետք է որոշենք: Մենք կորոշենք բոլոր հրատապ նախնական սպասարկման հարցումները ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Մենք կորոշենք հետսպասարկման բոլոր հարցումները 30 օրացուցային օրվա ընթացքում այն բոլոր տեղեկությունները ստանալուց հետո, որոնք մենք պետք է որոշենք: Հետսպասարկման հարցումները չեն համապատասխանում արագացված վերանայման գործընթացին:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

Մենք կարող ենք ինդիել 1 երկարաձգում (ուշացում), եթե մեզ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն, պետք է խորհրդակցենք փորձագետի վերանայողի հետ, կամ եթե մեզ անհրաժեշտ է, որ Դուք լրացնեք ավելի շատ քննություններ կամ թեստեր՝ որոշելու, թե արդյոք ծառայությունը կարող է հաստատվել: Երկարաձգումը չի կարող լինել ավելի քան 14 օրացուցային օր:

Եթե մեզ երկարաձգում պահանջվի, մենք Ձեզ գրավոր ծանուցում կուղարկենք՝ տեղեկացնելով, թե ինչ տեղեկատվություն է մեզ անհրաժեշտ և երբ ենք ակնկալում վերջնական որոշում կայացնել: Եթե համաձայն չեք մեր երկարաձգման հետ, կամ եթե մենք Ձեզ ժամանակին որոշում չենք տրամադրում, կարող եք բողոք ներկայացնել: . Բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար ուսումնասիրեք այս տեղեկագրի Գլուխ 8-ի «Խնդիրների զեկուցում և լուծում» բաժինը:

Երբ մենք որոշում կայացնենք, մենք կիրառարկենք գրավոր NABD, որը ներառում է պատճառ(ներ)ը և կլինիկական ուղեցույցները, որոնք մենք օգտագործել ենք ծառայությունները մերժելու, սահմանափակելու կամ փոփոխելու համար՝ Ձեզ համար պարզ և հեշտ հասկանալի ձևով: NABD-ը նաև կներառի «Ձեր իրավունքները» ներդիրը, որը տրամադրում է բողոքների և բողոքարկման գործընթացի Ձեր իրավունքները և բացատրում, թե որքան ժամանակ պետք է ներկայացնեք և ինչ քայլեր ձեռնարկեք:

Եթե մենք որոշում կայացնենք Ձեր նախնական սպասարկման հարցման կամ ծառայությունների կամ բուժման վճարման վերաբերյալ, որոնց հետ Դուք համաձայն չեք, կարող եք բողոքարկել: Բողոքարկում ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար անցեք այս տեղեկագրի Գլուխ 8-ի «Խնդիրների զեկուցում և լուծում» բաժինը:



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

## 8. Խնդիրների զեկուլցում և լուծում

Կան երկու տեսակի խնդիրներ, որ Դուք կարող եք ունենալ Ձեր ատամնաբուժական ծրագրի հետ.

- **Գանգատն** (կամ **բողոք**) այն է, երբ Դուք խնդիր ունեք LIBERTY-ի կամ մատակարարի կամ ատամնաբուժական խնամքի կամ բուժման հետ, որը ստացել եք մատակարարից:
- **Բողոքարկումն** այն է, երբ Դուք համաձայն չեք ծառայությունները չապահովագրելու LIBERTY-ի որոշման հետ:

Դուք նախ պետք է օգտագործեք LIBERTY-ի բողոքների և բողոքարկման գործընթացը՝ մեզ տեղեկացնելու Ձեր խնդրի մասին: Սա չի բացառում Ձեր որևէ օրինական իրավունքը և դատական պաշտպանության միջոցները: Մենք նաև խտրականություն չենք դրսևորի կամ հակազդի Ձեր դեմ՝ մեզ գանգատ ներկայացնելու համար: Ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելը կօգնի մեզ բարելավել խնամքը մեր բոլոր անդամների համար: Եթե Ձեր գանգատը լուծում չստանա, ապա Դուք կարող եք բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի վարչությանը (Department of Managed Health Care, DMHC): Եթե համաձայն չեք Ձեր բողոքարկման արդյունքների հետ, ապա Դուք կարող եք Նահանգային արդար լուծ խնդրել: Դուք պետք է ավարտեք LIBERTY-ի ներքին բողոքարկման գործընթացը **նախքան** Նահանգային արդար լուծ պահանջելը:

Դուք կարող եք նաև DMHC-ից Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, IMR) խնդրել: IMR-ը ատամնաբուժական ծրագրի որոշման անկողմնակալ վերանայում է: IMR-ը որոշում է բժշկական անհրաժեշտությունը, ապահովագրությունը և վճարման մասին բողոքները հրատապ կամ արտակարգ իրավիճակների ծառայությունների համար: Դուք պետք է դիմեք IMR-ի համար 6 ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ LIBERTY-ն Ձեզ գրավոր որոշում է ուղարկել Ձեր բողոքարկման վերաբերյալ:

Եթե նախ Նահանգային լուծ խնդրեք (տե՛ս ավելին ստորև՝ բողոքարկումների և Նահանգային լուծման մասին), այլևս **չեք կարող** Անկախ բժշկական վերանայում (Independent Medical Review, IMR) խնդրել: Սակայն, եթե նախ IMR խնդրեք և բավարարված չլինեք արդյունքով, Դուք կկարողանաք Նահանգային լուծ խնդրել: Դուք կարող եք օգնություն ստանալ Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի վարչությունից:

“Կալիֆորնիայի Կառավարվող առողջապահական խնամքի վարչությունը պատասխանատու է՝ կարգավորելու առողջապահական խնամքի ծառայությունների ծրագրերը: Եթե դուք բողոք ունեք Ձեր առողջապահական ծրագրի դեմ, նախ պետք է գանգահարեք Ձեր առողջապահական ծրագրին **888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար), 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար)** կամ **TTY համարին՝ 877-855- 8039 հեռախոսահամարներով** և օգտագործեք Ձեր առողջապահական ծրագրի բողոքարկման գործընթացը՝ նախքան բաժնի հետ կապվելը: Գանգատի այս ընթացակարգն օգտագործելը Ձեզ չի արգելի որևէ հնարավոր իրավաբանական իրավունքները կամ միջոցները, որոնք կարող են Ձեզ հասանելի լինել: Եթե գանգատ ներկայացնելու օգնության կարիք ունեք, որն արտակարգ իրավիճակ է ներառում, , գանգատ, որը բավարար կերպով չի լուծվել Ձեր առողջապահական ծրագրի կողմից, կամ որը չի լուծվել ավելի քան 30 օրվա ընթացքում, կարող եք գանգահարել բաժնին՝ աջակցություն ստանալու համար: Դուք կարող եք նաև իրավունակ լինել Անկախ բժշկական վերանայման (Independent Medical Review, IMR) համար: Եթե Դուք իրավունակ լինեք IMR-ի համար, IMR-



Ձանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Ձանգն անվճար է: Կամ գանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

ի գործընթացը անկողմնակալորեն կվերանայի առողջապահական ծրագրի կողմից կայացրած որոշումները, որոնք վերաբերում են առաջարկվող ծառայության կամ բուժման բժշկական տեսանկյունից անհրաժեշտությանը, բուժումների վերաբերյալ ապահովագրական որոշումներին, որոնք փորձարարական կամ հետազոտական բնույթ ունեն և արտակարգ իրավիճակների կամ անհետաձգելի բժշկական ծառայությունների համար վճարումների վերաբերյալ վեճերին: Վարչությունն ունի նաև անվճար հեռախոսահամար՝ **(888-466-2219) փ TDD համար (877-688-9891)**՝ լսողության և խոսքի/խանգարումներ ունեցող անձանց համար: Վարչության ինտերնետային կայքում՝ [www.dmhca.gov](http://www.dmhca.gov) առկա են բողոքի ձևաթղթեր, IMR դիմումի ձևաթղթեր և առցանց հրահանգներ:”

Կալիֆորնիայի DHCS Medi-Cal-ի կառավարվող խնամքի օմբուդսմենը նույնպես կարող է օգնել: Օմբուդսմենը կարող է օգնել այն խնդիրների առնչությամբ, որոնք ծրագիրը չի լուծել, խնդիրներ ծրագրին միանալու, փոփոխելու կամ հեռանալու առնչությամբ, և Medi-Cal Dental-ի կառավարվող խնամքի ծրագրին առնչվող այլ խնդիրներ: Դուք կարող եք զանգահարել Օմբուդսմենին **888-452-8609** հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00:

Ձեր Medi-Cal-ի իրավունակության վերաբերյալ բողոք կարող եք ներկայացնել նաև Ձեր վարչաշրջանի իրավունակության գրասենյակին: Եթե վստահ չեք, թե ում կարող եք ներկայացնել Ձեր բողոքը, զանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով:

## **Բողոքներ**

Բողոքը (կամ գանգատը) կարող է վերաբերել այն խնամքին, որն ստացել եք ցանցի մատակարարից: Բողոքը կարող է նաև վերաբերել LIBERTY-ին: Տես ստորև՝ հավելյալ տեղեկություններ ստանալու բողոքարկումների և Նահանգային լսումների վերաբերյալ: Դուք կարող եք Ձեր բողոքը ներկայացնել LIBERTY-ին, Ձեր PCD-ին կամ մասնագետին:

Դուք կարող եք մեզ բողոք ներկայացնել առցանց, Էլ. նամակով, փոստով կամ հեռախոսով: Գանգատ ներկայացնելու համար ժամանակի սահմանափակում չկա:

- **Առցանց բողոք ներկայացնելու համար** անցում կատարեք ստորև տրամադրված հղմանը և ընտրեք «Կալիֆորնիայի բողոքարկման ձևաթուղթ, առցանց ներկայացնել»: Լրացրեք բոլոր պահանջվող դաշտերը, ասացեք մեզ, թե ինչ է տեղի ունեցել և ինչպես կարող ենք օգնել Ձեզ: Ձեր բողոքն ավտոմատ կերպով կուղարկվի LIBERTY-ի բողոքների և բողոքարկման բաժին՝ վերանայման համար:
- **Էլ. փոստով բողոք ներկայացնելու համար** տրամադրեք Ձեր անունը, ատամնաբուժական ծրագրի ID համարը և Ձեր բողոքի պատճառը: Էլ. նամակ ուղարկեք [G&A@libertydentalplan.com](mailto:G&A@libertydentalplan.com) հասցեին: Մենք առաջարկում ենք, որ LIBERTY-ին ուղղված Ձեր էլ. նամակը գաղտնագրված (պաշտպանված) լինի՝ Ձեր անձնական առողջապահական տեղեկություններն ապահով պահելու համար:
- **Փոստով գանգատ ներկայացնելու համար** երկու ընտրանք ունեք: 1) Դուք կարող եք օգտվել ստորև տրված առցանց «Կալիֆորնիայի բողոքարկման ձևաթուղթը», տպեք մեկ օրինակ և փոստով կամ ֆաքսով ուղարկեք այն LIBERTY-ին կամ 2) Դուք կարող եք զանգահարել 888-703-6999



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:



## 65 | Խնդիրների գեկուցում և լուծում

(Լուս Անջելես վարչաշրջանի համար), 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), TTY 877-855- 8039 հեռախոսահամարներով և ինդիքեթ, որ Ձեզ ձևաթուղթ ուղարկեն: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն և փոստով կամ ֆաքսով ուղարկեք LIBERTY: Համոզվեք, որ Նշել եք Ձեր անունը, ատամնաբուժական ծրագրի ID համարը և Ձեր բողոքի պատճառը: Ասացեք մեզ, թե ինչ է տեղի ունեցել և ինչպես կարող ենք օգնել Ձեզ:

- **Հեռախոսով բողոք ներկայացնելու համար** գանգահարեք 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար), 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039 հեռախոսահամարներով: Նշեք Ձեր անունը, ատամնաբուժական ծրագրի ID համարը և Ձեր բողոքի պատճառը:

### **Փոստով ուղարկեք հետյալ հասցեով՝**

LIBERTY Dental Plan

Grievances and Appeals Department

P.O. Box 26110, Santa Ana, CA 92799-6110

**Աղցանց՝** <https://www.libertydentalplan.com/Members/File-a-Grievance-or-Appeal.aspx> հասցեով:

**Ֆաքսով ուղարկել՝** 833-250-1814 համարին:

Եթե Ձեր գանգատը ներկայացնելու հարցում օգնություն է հարկավոր, մենք կարող ենք օգնել Ձեզ: Մենք կարող ենք Ձեզ տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Չանգահարեք 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), կամ TTY՝ 877-855- 8039 հեռախոսահամարներով: Ձեր բողոքը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում մենք Ձեզ գրավոր ծանուցում կուղարկենք՝ տեղեկացնելով, որ այն ստացել ենք: 30 օրվա ընթացքում մենք Ձեզ գրավոր կերպով կտեղեկացնենք, թե ինչպես լուծեցինք Ձեր խնդիրը:

Եթե ցանկանում եք, որ մենք արագ որոշում կայացնենք, քանի որ Ձեր բողոքը լուծելու համար պահանջվող ժամանակը վտանգի տակ կդնի Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու ունակությունը, կարող եք հրատապ վերանայում ինդիքել: Հրատապ վերանայում ինդիքելու համար գանգահարեք 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039 հեռախոսահամարներով: Մենք կորոշենք Ձեր բողոքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում՝ տեղեկացնելով Ձեզ հեռախոսով և գրավոր:

## Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբերվում է գանգատից: Բողոքարկումը LIBERTY-ին ուղղված ինդիքանք է՝ վերանայելու և փոփոխելու մեր կայացրած որոշումը՝ կապված պահանջվող կամ ավարտված ծառայության ապահովագրության հետ: Եթե Ձեզ ուղարկել ենք NABD, և Դուք համաձայն չեք մեր որոշման հետ, կարող եք բողոքարկել, կամ Ձեր PCD-ն կարող է բողոքարկել Ձեր փոխարեն: Եթե ցանկանում եք, որ Ձեր PCD-Ձեր անունից բողոքարկում ներկայացնի, Դուք պետք է նրան գրավոր հաստատում տրամադրեք:

Դուք կարող եք բողոքարկել հեռախոսով, առցանց կամ փոստով: Դուք պետք է բողոքարկումը ներկայացնեք Ձեր ստացած ծանուցման ամսաթվից հետո 60 օրվա ընթացքում:



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լուս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ գանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

- **Առցանց գանգատ ներկայացնելու համար** անցում կատարեք ստորև տրամադրված հղմանը և ընտրեք «Կալիֆորնիայի բողոքարկման ձևաթուղթ, առցանց ներկայացնել»։ Լրացրեք բոլոր պահանջվող դաշտերը, ասացեք մեզ, թե ինչ է տեղի ունեցել և ինչպես կարող եմ օգնել Ձեզ։ Ձեր բողոքն ավտոմատ կերպով կուղարկվի LIBERTY-ի բողոքների և բողոքարկման բաժին՝ վերանայման համար։
- **Էլ.փոստով բողոք ներկայացնելու համար** տրամադրեք Ձեր անունը, ատամնաբուժական ծրագրի ID համարը և Ձեր բողոքի պատճառը։ Էլ.նամակ ուղարկեք [G&A@libertydentalplan.com](mailto:G&A@libertydentalplan.com) հասցեին։ Մենք առաջարկում ենք, որ LIBERTY-ին ուղղված Ձեր էլ.նամակը գաղտնագրված (պաշտպանված) լինի՝ Ձեր անձնական առողջապահական տեղեկություններն ապահով պահելու համար։
- **Հեռախոսով բողոքարկելու համար** գանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), կամ TTY՝ 877-855- 8039 հեռախոսահամարներով։ Ներառեք Ձեր անունը, ատամնաբուժական ծրագրի ID համարը, NABD համարը, ծառայությունը, որը Դուք բողոքարկում եք, և ինչու եք կարծում, որ ծառայությունը պետք է հաստատվի։
- **Փոստով գանգատ ներկայացնելու համար** երկու ընտրանք ունեք։1) Դուք կարող եք օգտվել ստորև տրված առցանց «Կալիֆորնիայի բողոքարկման ձևաթուղթը», տպեք մեկ օրինակ և փոստով կամ ֆաքսով ուղարկեք այն LIBERTY-ին կամ 2) Դուք կարող եք գանգահարել 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար), 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), TTY 877-855- 8039 հեռախոսահամարներով և խնդրեք, որ Ձեզ ձևաթուղթ ուղարկեն։ Խնդրեք, որ բողոքի ձևաթուղթը Ձեզ ուղարկեն։ Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն և փոստով կամ ֆաքսով ուղարկեք LIBERTY: Համոզվեք, որ ներառել եք Ձեր անունը, ծրագրի ID համարը, NABD համարը և ծառայությունը, որը Դուք բողոքարկում եք։

**Ձյաթուղթ փոստով ուղարկեք հետյալ հասցեով՝**

LIBERTY Dental Plan  
Grievances and Appeals Department  
P.O. Box 26110  
Santa Ana, CA 92799-6110

**Առցանց՝** <https://www.libertydentalplan.com/Legal/Grievances.aspx> հասցեով։

**Ֆաքսով ուղարկել՝** 833-250-1814 համարին։

Եթե մեր ուղարկած ծանուցումը տեղեկացնի Ձեզ, որ այդ ծառայությունը կդադարեցվի, Դուք կարող եք շարունակել ստանալ այն Ձեր բողոքարկման ընթացքում։ Դա անելու համար Ձեր PCD-ն պետք է բողոքարկում ինդիի ծանուցման ուղարկման ամսաթվից 10 օրվա ընթացքում։ Դուք պետք է տեղեկացնեք մեզ, որ ցանկանում եք շարունակել ծառայություններ ստանալը։

Եթե Ձեր բողոքարկումը ներկայացնելու հարցում օգնություն է հարկավոր, մենք կարող ենք օգնել Ձեզ։ Մենք կարող ենք Ձեզ տրամադրել անվճար լեզվական ծառայություններ։ Չանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով։

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում մենք Ձեզ գրավոր ծանուցում կուղարկենք՝ տեղեկացնելու, որ այն ստացել ենք։ 30 օրվա ընթացքում մենք Ձեզ գրավոր կհայտնենք բողոքարկման վերաբերյալ մեր որոշումը։



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով։ LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00։ Չանգն անվճար է։ Կամ գանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով։

Եթե Դուք կամ Ձեր PCD-ն ցանկանում է, որ մենք արագ որոշում կայացնենք, քանի որ Ձեր բողոքարկումը լուծելու համար պահանջվող ժամանակը վտանգի տակ կղնի Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու ունակությունը, կարող եք խնդրել հրատապ վերանայում իրականացնել: Հրատապ վերանայում խնդրելու համար զանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY 877-855-8039 հեռախոսահամարներով: Մենք կորոշենք Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

## Նահանգային լսումներ

Նահանգային լսումը հանդիպում է Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության (Department of Social Services, DSS) աշխատակիցների հետ: Դատավորը կօգնի լուծել Ձեր խնդիրը: Դուք կարող եք Նահանգային լսումներ խնդրել միայն այն բանից **հետո**, երբ ավարտեք բողոքարկման գործընթացը LIBERTY-ի շրջանակներում, և եթե Դուք դեռևս գոհ չեք որոշումից կամ եթե 30 օր հետո չեք ստացել Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշումը:

Կարող եք Նահանգային լսում խնդրել հեռախոսով կամ գրավոր: Դուք պետք է Նահանգային լսում խնդրեք բողոքարկման որոշման վերաբերյալ ծանուցման ամսաթվից ոչ ուշ քան 90 օրացույցային օրվա ընթացքում: Ձեր PCD-ն կարող է Ձեզ համար Նահանգային լսում խնդրել, եթե նա DSS-ից թույլտվություն ստանա: Չանգահարեք DSS, որպեսզի Նահանգից խնդրեք թույլատրել Ձեր PCD-ին Նահանգային լսում խնդրել:

Եթե մեր ուղարկած ծանուցումը տեղեկացնի Ձեզ, որ այդ ծառայությունը կդադարեցվի, Դուք կարող եք շարունակել ստանալ այն Ձեր Նահանգային լսման ընթացքում: Դա անելու համար Դուք կամ Ձեր PCD-ն պետք է Նահանգային լսում խնդրի ծանուցման ուղարկման ամսաթվից 10 օրվա ընթացքում: Դուք պետք է տեղեկացնեք մեզ, որ ցանկանում եք շարունակել ծառայություններ ստանալը:

Հեռախոսով Նահանգային լսում խնդրելու համար զանգահարեք Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության (Department of Social Services, DSS) Հանրային արձագանքման բաժին՝ **800-952-5253 (TTD 800-952-8349)** հեռախոսահամարով:

Փոստով Նահանգային լսում խնդրելու համար լրացրեք Ձեր բողոքարկման լուծման ծանուցման հետ ուղարկված ձևաթուղթը:

**Ձյաթուղթը փոստով ուղարկեք հետյալ հասցեով՝**  
California Department of Social Services  
State Hearings Division  
P.O. Box 944243, MS 09-17-37  
Sacramento, CA 94244-2430

Եթե Նահանգային լսում խնդրելու հարցում օգնության կարիք ունեք, մենք կարող ենք Ձեզ օգնել: Մենք կարող ենք Ձեզ տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Չանգահարեք 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար), կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: Լսման ժամանակ Դուք կներկայացնեք Ձեր կողմը: Մենք կներկայացնենք մեր կողմը: Դատավորից մինչև 90 օր կպահանջվի Ձեր գործի վերաբերյալ որոշում



Չանգահարեք Անդամների սպասարկման բաժիններ՝ 888-703-6999 (Լոս Անջելես վարչաշրջանի համար) կամ 877-550-3875 (Սակրամենտո վարչաշրջանի համար) կամ TTY՝ 877-855-8039 հեռախոսահամարներով: LIBERTY-ում աշխատում են երկուշաբթիից ուրբաթ, 8:00-ից 17:00: Չանգն անվճար է: Կամ զանգահարեք California Relay Line-ին՝ 711: Այցելեք առցանց՝ [www.libertydentalplan.com](http://www.libertydentalplan.com) հասցեով:

կայացնելու համար:

Եթե ցանկանում եք, որպեսզի մենք արագ որոշում կայացնենք, քանզի այդ ժամանակը վտանգի կենթարկի Ձեր կյանքը, առողջությունը կամ գործունեության կարողությունը, Դուք կամ Ձեր PCD-ն կարող եք գրել DSS-ին: Դուք կարող եք արագացված (արագ) Նահանգային լսում խնդրել: DSS-ը պետք է որոշում կայացնի Ձեր հարցումը ստանալուց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե Դուք արդեն Նահանգային լսում եք ունեցել, այլևս **չեք** կարող IMR խնդրել: Սակայն, եթե Դուք նախ IMR եք խնդրել և բավարարված չեք արդյունքով, Դուք դեռ կարող եք Նահանգային լսում խնդրել:

## Խարդախություն, վատնում և չարաշահում

Եթե կարծում եք, որ մատակարարը կամ Medi-Cal Dental ստացող անձը խարդախություն, վատնում կամ չարաշահում է գործել, Ձեր իրավունքն ու պատասխանատվությունն է հայտնել դրա մասին:

Մատակարարի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում է.

- Ատամնաբուժական արձանագրությունների փոփոխություն:
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտից ավելի դեղորայքի նշանակում:
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտից ավելի ատամնաբուժական խնամքի ծառայությունների տրամադրում:
- Չտրամադրված ծառայությունների համար հաշվի ներկայացում:
- Մասնագիտական ծառայությունների դիմաց հաշվի ներկայացում, երբ մասնագետը չի կատարել ծառայությունը:

Նպաստներ ստացող անձի խարդախությունը, վատնումը և չարաշահումը ներառում են.

- Պարտքի տրամադրում, վաճառք կամ ատամնաբուժական ծրագրի ID քարտի կամ Medi-Cal BIC քարտի տրամադրումը մեկ ուրիշին:
- 1-ից ավելի մատակարարից նմանատիպ բուժում կամ միևնույն դեղամիջոցներ ստանալը:
- Շտապ օգնության սենյակի այցելություն, երբ այն արտակարգ իրավիճակ չէ:
- Մեկ այլ անձի Սոցիալական ապահովության համարի կամ ատամնաբուժական ծրագրի ID համարի օգտագործումը:

Խարդախության, վատնման և չարաշահումների մասին հայտնելու համար տպեք խախտում կատարած անձի անունը, հասցեն և Նույնականացման համարը: Տրամադրեք մեզ որքան հնարավոր է շատ տեղեկատվություն մատակարարի կամ անձի մասին, օրինակ՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե դա մատակարար է: Տեղեկացրեք դեպքերի ամսաթվերը, և դեպքերի ճշգրիտ ընթացքի ամփոփումը:

**Ձեր գեկույցն ուղարկեք հետոյալ հասցեով՝**

LIBERTY Dental Plan

Special Investigations Unit

P.O. Box 26110, Santa Ana, CA 92799-6110



